ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-184

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

«26» 10 2018թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2018 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 17-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

22.10.18 ՈՐՈՇՈՒՄ 17-Ա

Հասցե․ Արմավիրի մարզ
Ոսկեհատ համայնք

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի՝ բնակիչ՝ Գեղամ Կրասնառլենի Հովհաննիսյանի (ծնված 11.07.1964թ.) դիմել է Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքի Մաշտոց փող. 58 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 14.03.1992թ թիվ 5 որոշման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի տրվ.14.02.2010թ. ս/մ 488) 0,06 հա օրինական հողամասի որից 0□0262 հա առանձ հողակտորով և կից ավել օգտագործվող 0□0107(որից 0□0088 հա ընդհանուր օգտագործման տարածք) ավել օգտագործվող հողամասի, կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄԵՄ

1. Վերականգնել Արմավիրի մարզի, Ոսկեհատ՝ համայնքի Մաշտոց փող. 58 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Գեղամ Կրասնառլենի Հովհաննիսյանի (ծնված 11.07.1964թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,06հա հողամասի և հողամասին կից ավել օգտագործվող 0.0107 հա հողամասի (որից 0.0088 հա ընդհանուր օգտամգործման տարածք ), ընդհանուր հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն՝ 179.0քմ. կառուցված 1936-90թթ, ծածկ՝ 20.1.0քմ. կառուցված 1980թ, ծածկ 14.6քմ. կառուցված 1980թ.,անասնաշենք 16.6քմ. կառուցված 1950թ և պարիսպ 2.7քմ. կառուցված 1990թ):

Բնակելի տունը բավարարում է <<ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Գեղամ Կրասնաուլենի Հովհաննիսյանի ( ծնված 11.07.1964թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել Մաշտոց փող. 58 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ